Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2025, Vol. 16, No. 3(48), հոկտեմբեր, 81-90
https://doi.org/10.46991/BYSU.E/2025.16.3.081

ՄԻՍՏԻ՞Կ Է ԱՐԴՅՈՔ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՆ

ՀԱՅԿ ՀԱՐՈՅԱՆ*
Շիրակի պետական համալսարան
ՆԵԼԼԻ ՀԱՐՈՅԱՆ**
Երևանի պետական համալսարան

Հոդվածում վերաիմաստավորվում է միջնադարի հայ հանճարեղ մտածող Գր. Նարեկացու միստիկ լինելու՝ նարեկացիագիտության մեջ տիրապետող տեսակետը: Մասնավորապես փաստարկվում է, որ նրան անվերապահորեն միստիկների շարքին դասելը հակասում է «Մատեանի» ոգուն և տրամաբանությանը, քանզի, նախ՝ այնտեղ պատկերվում են մարդկային կյանքի ողբերգականությունը և վեհությունը. երկրորդ՝ այդ եզակի ստեղծագործության մեկնաբանության ժամանակ, հակառակ հեղինակի կամքի, անտեսվել է հիմնականը, այն է՝ մարդկային կեցության ողբերգականությունը իր բոլոր դրսևորումներով, և առավելապես շեշտադրվել է ձևը, այլ ոչ թե բովանդակությունը. երրորդ՝ ի տարբերություն միջնադարում տիրապետող աստվածակենտրոն ըմբռնման՝ Նարեկացին զարգացնում է մարդակենտրոն հայեցակարգ, որի կենտրոնում իրական մարդն է իր հոգսերով ու տագնապներով: Իր ամբողջության մեջ «Մատեանը» բանական գոյի, «հոգևոր մահվան» սահմանագծում հայտնված մարդու ողբերգությունը ներկայացնող գործ է. ողբերգություն, որը առաջանում է աստվածայինի և մարդկայինի, բարու և չարի, մեծի ու փոքրի բախման արդյունքում՝ ներկայացված քրիստոնեական սիմվոլիկայի միջոցով՝ իբրև տուրք դարի մտայնությանը: Նարեկացին մարդկային ցեղի տառապանքի ու ցավի երգիչն է, որը և պայմանավորում է նրա ստեղծագործության համամարդկային բնույթը:

* **Հայկ Հարոյան** – փիլիսոփայական գիտությունների թեկնածու, Շիրակի պետական համալսարանի պատմության և իրավագիտության ամբիոնի դոցենտ
Айк Ароян – кандидат философских наук, доцент кафедры истории и философии Ширакского государственного университета
Hayk Haroyan – Candidate of Philosophical Sciences, Associate Professor at the Chair of History and Philosophy of Shirak State University
Էլ. փոստ՝ h.haroyan48@mail.ru https://orcid.org/0009-0001-3770-4277
** **Նելլի Հարոյան** – հոգեբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սոցիալական և կլինիկական հոգեբանության ամբիոնի դոցենտ
Нелли Ароян – кандидат психологических наук, доцент кафедры социальной и клинической психологии ЕГУ
Nelli Haroyan – Candidate of Psychological Sciences, Associate Professor at the Chair of Social and Clinical Psychology, YSU
Էլ. փոստ՝ n.haroyan@mail.ru https://orcid.org/0009-0008-6542-6594

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 15.05.2025
Գրախոսվել է՝ 29.05.2025
Հաստատվել է՝ 24.10.2025
© The Author(s) 2025

Ըստ էության Մարդ-Աստված փոխհարաբերության հիմնահարցի նարեկյան մեկնաբանությունն ամենևին չի ներդաշնակվում միստիկական ըմբռնմանը, քանզի Նարեկացու վերջնանպատակը բացառապես անձնական փրկության արժանանալը և Աստծուն ձուլվելն ու նրան միանալը չէ, ինչը ներհատուկ է միստիցիզմին, այլ մարդու և մարդկության հոգևոր վերափոխման ու ինքնակատարելագործման միջոցով փրկության հասնելն է այսկողմնային աշխարհում՝ այստեղ և հիմա:

Բանալի բառեր – *Մարդ, Աստված, միստիկա, ողբերգություն, ինքնակատարելագործում, հոգևոր վերափոխում, բանականություն, փրկություն, հավատ*

«...Չճանաչեցի ինքզինքս ու չեմ իմանա երբեք,
թե որի ձեռքով և ում պատկերով, ինչո՞ւ գոյացա»:
«Մատեան ողբերգութեան», Զ, ա

Նախ՝ ստեղծագործության վերնագրի մասին: «Մատեանի» իրական բովանդակությունն ու արժեքը բացահայտելու համար նախևառաջ հարկ է զերծ մնալ պատմականորեն ձևավորված կարծրատիպերից և հարազատ մնալ նրա ոգուն ու բովանդակությանը: Գրիգոր Նարեկացին «Մատեանում» շարունակ հիշեցնում է ընթերցողին, որ իր ստեղծագործությունը ողբերգություն է, հետևապես մենք պարտավոր ենք ընդունել այն որպես այդպիսին: Ինչպես իրավացիորեն գրում է նարեկացիագետ Հր. Միրզոյանը, «…Հայ հանճարի գլուխգործոց ստեղծագործությունը պետք է դիտել ոչ թե որպես միայն աղոթագիրք, այլ նախ և առաջ իբրև **իսկապես ողբերգություն, ինչպես այն անվանել է հեղինակն ինքը**: Այդ դեպքում շատ ու շատ բան կհասկացվի այլ կերպ, քան հասկացվել է մինչև այժմ…»[1] (ընդգծ. մերն է՝ Հ. Հ., Ն. Հ.): Հակված ենք կարծելու, որ նույն իրավիճակն է նաև սույն հոդվածում քննարկվող հիմնահարցի առումով: Այս առնչությամբ տեղին ենք համարում մեջ բերել նաև նշանավոր նարեկացիագետ Պ. Խաչատրյանի մի շատ կարևոր դիտարկումը, որը, մեր կարծիքով, նույնպես պետք է ելակետային լինի «Մատեանի» ժամանակակից մեկնաբանություններում: Այսպես, նա գրում է, որ սկսած 13-րդ դարից՝ ի հայտ են գալիս «Մատեանի» մի շարք լուծմունքներ, որոնց հեղինակները հիմնականում «ծանրության կենտրոն են դարձրել Նարեկացու գեղարվեստական-իմաստասիրական վաստակի աստվածաբանական շերտերի բացատրությունը:…Անշուշտ, այդ հարցում նրանք խախտել են չափի զգացումը՝ Նարեկացու հանճարի ինքնաբուխ ամեն մի փայլատակում հախուռն ձգտումով ենթարկելով Հին ու Նոր Կտակարանի տառին ու բառին»[2]**:** Այո՛, «իբրև բազմագիծ ու բազմաչափ երկ՝ այն պետք է ուսումնասիրվի ու գնահատվի տարբեր տեսանկյուններից ու

[1] **Միրզոյան Հ. Ղ.,** Նարեկացիագիտական հետազոտություններ (Հոդվածների ժողովածու), Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 161:

[2] **Խաչատրյան Պ.,** Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, գիրք առաջին, Ս. Էջմիածին, 1996, էջ 381:

տարբեր մոտեցումներով, որովհետև միագիծ, միաչափ ու միակողմանի մոտեցմամբ անհնար է ընկալել նրա բազմաբնույթ կամ բազմաստեղնյան բովանդակությունն ու հասկանալ նրա խորհուրդն ու իմաստը: Մինչդեռ հակառակ բանաստեղծի պահանջի՝ մինչև օրս այն հիմնականում ընթերցվել, ընկալվել, հասկացվել ու մեկնաբանվել է միագիծ ու միաչափ մոտեցմամբ»[3]: Եվ ընդհանրապես, ելնելով «Մատեանի» արտահայտչաձևից՝ այն կարող է դիտարկվել և՛ որպես աղոթագիրք, և՛ որպես պոեմ, և՛ որպես խոստովանություն, և՛ որպես ողբերգություն, և՛ նույնիսկ՝ միստիցիզմի դրսևորում: Այո՛, «Մատեանում» առկա է միստիկայի տարրը, և ընդամենը: Ուստիև մեղանչած կլինենք «Մատեանի» էության, գաղափարական միտվածության ու նրա հեղինակի հանդեպ, եթե նրան անվերապահորեն դասենք միստիկ մտածողների շարքին[4], քանի որ բովանդակային առումով, իր ընդգրկումով ու սահմանային ընդհանրացումներով «Մատեանը» Մարդ-Աստված հակադրության համատեքստում կրոնական խորհրդանիշների գործածմամբ (Աստված, մեղք, աղոթք[5] ևն՝ իբրև դարաշրջանի մտայնության արտացոլում) մարդկային կեցության ողբերգականությունը պատկերող, մարդու մեջ աստվածայինի (կատարյալի) հնարավորությունը բացահայտող ու հաստատող կոթողային գործ է: Այլ կերպ՝ «Մատեանի» բուն ոգին՝ Մարդ-Աստված փոխհարաբերության նարեկյան նորովի մեկնաբանությունն իր երկրային ուղղվածությամբ դուրս է գալիս միստիկական հայեցողության շրջանակներից, ավելին՝ ներկայանում է որպես վերջինիս այլընտրանք և նույնիսկ՝ բացառում:

Իսկ հիմա անդրադառնանք բուն թեմային: Այսպես, ի՞նչ են *միստիկան և միստիցիզմը.* միստիկան սահմանվում է որպես «կրոնական գործունեություն, որի նպատակը էքստազի (վերապրումների) միջոցով անմիջականորեն Աստծու հետ «ձուլվելն» է», իսկ միստիցիզմը համարվում է «իռացիոնալիստական, ինտուիտիվիստական փիլիսոփայության տարատեսակ, ուսմունք, որը ընդունում է գոյություն ունեցող իրականությունը բանականությամբ ճանաչելու անհնարինությունը»[6]: Ասել է թե՝ *միստիկը նա է, ով գործնականում ձգտում է ինքնախորասուզման, վերապրումների (էքստազի), գաղտնի կապերի միջոցով անմիջականորեն միանալ Աստծուն և ժխտում է բանականությամբ իրա-*

---

[3] **Միրզոյան Հ. Ղ.**, նշվ. աշխ., էջ 145:

[4] Գրիգոր Նարեկացու՝ որպես միստիկ մտածողի որակումները սկզբնավորվել են անցյալ դարի կեսերին (Մ. Աբեղյան, Հ. Մանանդյան, Լեո, Հ. Գաբրիելյան, Վ. Չալոյան, Մ. Մկրյան, Վ. Նալբանդյան) և շարունակվում են առ այսօր (Ս. Պողոսյան, Զ. Ավետիսյան և այլք), ու ավանդույթի ուժով վերածվել են կարծրատիպի:

[5] Ի դեպ, աղոթքին՝ իբրև Աստծու հետ հաղորդակցվելու ակնածալի եղանակի բնորոշ է լռության մեջ ցածրաձայն, հանդարտ, շշուկով ասված խոսքը, մրմնջոցը, մինչդեռ Նարեկացին իր «դառնահեծ պաղատանքները» առ Աստված առաքում է «բարձրաղաղակ», «ամենահառաչ հեծության ձայնով»…

[6] Советский энциклопедический словарь, 3-е изд.-М.: Сов. энциклопедия, 1985, с. 810.

կանությունը և Աստծուն ճանաչելու հնարավորությունը: Այս առումով մարդու գոյության իմաստին, նպատակին ու կոչմանը վերաբերող նարեկացիական հարցադրում-լուծումները անհնար է տեղավորել միստիցիզմի և միստիկ մտածողի աշխարհայեցողության շրջանակներում: Նրա ուսմունքը իր անձիր ընդգրկումով չի տեղավորվում ոչ մի «իզմի» մեջ: Եվ ահա թե ինչու:

Առաջին՝ «Մատեանը» *իր էությամբ* եկեղեցու արմատական բարեփոխման ծրագիր է՝ հիմնված անմիջական, բանական, գիտակցական հավատի գաղափարի քարոզչության վրա: Այսպես, սկզբից նեթ դիմելով Աստծուն՝ Նարեկացին բանաձևում է իր ապագա ասելիքը. «… Եւ մատուցեալ եդեալ ի հուր թախծութեան անձին տոչորման զպտուղ ըղձից ճենճերոյ սասանեալ մտացս՝ բուրվառաւ կամացս առաքել առ քեզ: Այլ հոտոտեսցի'ս, հայեսցի'ս, գթած, քան ի պատարագն բոլորապտուղ, մատուցեալ ծխոյն բարդութեան: Ընկա'լ զսակաւամասնեայ յաւդուածս բանից՝ քեզ ի հաճութիւն և մի' ի բարկութիւն», և դիմելով Աստծուն՝ շարունակում է, որ աղերսախառն դատի մտնելը իր հետ նա չհամարի տաղտկալի և ամբարշտություն, այլ ընդունի այն՝ իբրև «բանական զոհի» կողմից մատուցվող «կամաւորական նուէր»[7]: Ավելին, կարծես կանխազգալով իր հրաշակերտության թյուր, ոչ համարժեք և միակողմանի ընկալման ու մեկնաբանության հնարավորությունը՝ նա «Մատեանի» տարբեր գլուխներում բազմիցս ընդգծում է, որ այն «ողբերգության մատեան» է, «կտակամատյան ողբերգության» (Բ, բ), և գրված է այլաբանորեն, «դարձեալ այլաբանեցից» (ԻԲ, ա), այն է՝ մեղքերի խոստովանության և աղոթքների ձևով:

Երկրորդ՝ Նարեկացու կողմից գործնական ու բանական հավատի առաջադրումը ինքնին հանգեցնում է կրոնական կասկածամտության: Միստիկն անվերապահորեն ընդունում է Աստծու մարդասիրությունն ու հզորությունը և միանգամայն գոհանում է այդքանով: Միստիկական հավատը չի կասկածում և չի դժգոհում, այլ արդարացնում է իրերի՝ գոյություն ունեցող վիճակը և համբերատար, անմռունչ սպասում է աստվածային կամքի դրսևորումներին: Մինչդեռ «Մատեանը» միայն աղերս ու պաղատանք չէ, այլև կասկածանք և ըմբոստություն, պոռթկում ու վիճաբանություն: Հավատը՝ առհասարակ, միստիկականը՝ մասնավորապես, չեն բողոքում և չեն դժգոհում, նրանց բնորոշ չեն աստվածային ճշմարտությունները կասկածի ենթարկելը, Աստծու խոսքի և գործի միջև հակասություններ տեսնելը, վիճաբանական հարաբերության մեջ մտնելը, առավել ևս նրան հակադրվելը, «**աղերսախառն դատի մտնելը**» ու նրան «**հանդիմանական դատավճիռ**» ներկայացնելը: Իրականում Մարդ-Աստված փոխհարաբերության նարեկյան ըմբռնման մեջ առկա է բացահայտ բողոք, նաև արժանապատիվ կյանքի պահանջ. իրողություններ, որ ակնհայտորեն անհարիր են միստիկական ըմբռնմանը: Միստիկային խորթ է նաև վիճաբանական հարաբերությունը Աստծո հետ: Կարճ ասած՝ ըմբոստությունն ու

[7] **Նարեկացի Գ.,** Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, Ա, ա: Այսուհետև՝ հղումները տեքստում:

միստիկական անհամատեղելի են. ըմբոստը միստիկ չի կարող լինել, իսկ միստիկը՝ ըմբոստ: Եթե միստիկի վերջնանպատակը Աստծուն միաձուլվելն է, ապա «ապստամբ» Նարեկացին Աստծուց «պահանջում է» արդար, արժանապատիվ, երջանիկ կյանքի պայմաններ ստեղծել մարդու համար այստեղ՝ երկրի վրա: Նարեկացու մարդակենտրոն աշխարհայացքի տեսանկյունից Աստծու նկատմամբ հավատի հիմքը մարդասիրության հուսալի, որոշակի վկայություններն են, որոնք եթե ուշանում են կամ ընդհանրապես չկան, ապա ակնածանքը ուղեկցվում է լարված հարաբերությամբ ու երկխոսությամբ Աստծու հետ և ի վերջո վերածվում է ընդվզման: Արդ, ունկն չդնելով Աստծու հորդորներին, չվախենալով ու չզարհուրելով նրա սպառնալիքներից՝ Նարեկացին ծառանում է նրա դեմ. «Սպառնացար, եւ ոչ զարհուրեցայ, արգահատեցեր, եւ ոչ երբէք լուայ, որ է' ապստամբութեան յայտնի նշանակ» (Ի,բ): Մի՞թե «Մատեանի» ըմբոստ ոգու այս ակնհայտ դրսևորումները ներդաշնակվում են Մարդ-Աստված փոխհարաբերության միստիկական հայեցակարգին: Ավելին, Նարեկացու համար Աստված ոչ միայն դատավոր է, ինչպես Հոբն ու Օգոստինոսն էին ընդունում, կամ՝ մեղադրյալ, ինչպես Դոստոևսկին է համարում, այլև պատասխանատու մարդու կյանքի համար, մարդկության առջև պարտավորություն ունեցող: Նարեկացին հանդես է գալիս ոչ միայն բանավիճողի, այլև պահանջատիրոջ դիրքերից, երբ առաջադրում է մարդու ճակատագրի, նրա կյանքի ընթացքի համար Աստծու պատասխանատվության հարցը: Այսպես, թեև խոր կսկիծով ու դառնությամբ, բայց և ակնածանքով նա հանդիմանում է Աստծուն այն բանի համար, որ իրեն է վերապահել բոլոր իրավունքներն ու արժանիքները, իսկ պարտականություններն ու պատասխանատվությունը թողել մարդուն. «*Քեզ արդարութիւն հանդերձեցեր, բարերար, եւ ինձ ամաւթ եւ պատկառանս պատրաստեցեր…Քեզ բարեբանութիւն անլռելի, եւ ինձ՝ ձայնս ողբոց աղաղակի,…Քեզ՝ բարձրութիւն անճառ գովեստից, եւ ինձ՝ զաճիւն լիզելոյ պատիժ ձաղանաց*» (Ի,գ): Ողջ երկրայինը իր մեջ ամփոփած «աղոթանվեր պատգամավոր» դարձած հանճարեղ սուրբը (Ս. Ավերինցև) Աստծու ատյանում ստանձնում է *մարդու* և *մարդկության* շահերի պաշտպանի դերը և պատասխանատվության հայց ներկայացնում նրան՝ երկրային կյանքում գոյություն ունեցող չարիքի ու անարդարությունների համար: Աստված՝ որպես մարդասեր, ասում է Նարեկացին, չպետք է թողնի անտեր և անուշադրության մատնի «հավիտենական մոլորյալին»՝ մարդուն: Եվ եթե մարդը պարտական է Աստծուն իր գոյության համար, ապա Աստված էլ պարտավոր է հոգ տանել նրա փրկության համար՝ որպես իր ստեղծագործության, և սերը առ Մարդ Նա պետք է դարձնի մշտական գործընթաց, օգնի մարդուն հասնելու իրական փրկության: Այլ կերպ՝ նա Աստծուց պահանջում է այնկողմնային (տրանսցենդենտալ) իրականությունից վերածվել այսկողմնային իրականության, այն է՝ իր վերացական մարդասիրությանը հաղորդել գործնական բնույթ:

Երրորդ՝ միստիկական հայեցակարգի տեսանկյունից Աստծու էության ճանաչումը մարդկային բանականությանն անհասանելի է, և աստվածիմացության միակ ճշմարիտ ուղին համարվում է միստիկական ներհայեցողությունը[8]: Եվ եթե Աստծու հետ հարաբերվելու հոգևոր ապրումները միստիկական փորձը սահմանափակում է զգացմունքային ոլորտով, ապա Նարեկացու համար աստվածային էությունը բանական ճանաչողության առարկա է, իսկ հավատն էլ չտարորոշված ու վերացական հոգևոր վիճակ չէ (ինչը ներհատուկ է միստիկական փորձին), այլ հոգու և մարմնի ներդաշնակության, կատարելության հասնելու ընթացք, որը ձեռք է բերվում իմացության երկու անհրաժեշտ կողմերի՝ բանականության և հավատի համադրման, դրանց լծակցության միջոցով: Ավելին, միստիկային բնորոշ գծերից մեկը կրոնական վերապրումների տարաձաժամանակային չափումներից դուրս լինելն է, այսինքն՝ զուտ հոգևոր երևակայական վիճակ, մինչդեռ Նարեկացու վերապրումները շաղախված ու թաթախված են երկրային կյանքի հոգսերով ու մտահոգություններով: Եվ քանի որ հավատը նրա համար կենսաձև է, ապրելակերպ, բանական էակի գոյաձև, ուստի և նա առաջադրում է ոչ թե Աստծու հետ զուտ հոգևոր-միստիկական միասնության հասնելու, այլ երկրային կյանքում՝ թե՛ մարմնապես և թե՛ հոգեպես վերակազմավորվելու պահանջ:

Չորրորդ՝ Նարեկացին մեծ մարդասեր է և ոչ թե մեծ միստիկ: Նրա ուսմունքի ելակետը որոշակի է՝ մարդը՝ իրական մարդասիրության հաստատման պահանջով և իրական փրկության հույսով: Մեծ մարդասերի «մտքից ու հոգուց» ժայթքող «գուժկան աղաղակը» երկրային կյանքի անկատար լինելու գիտակցման, տառապող մարդու հանդեպ դրսևորվող անսահման սիրո դրսևորում է: Նա մարդկային ցեղի տառապանքների ու ցավի երգիչն է. «Արդ, ես՝ ճշգրիտ պատկեր ամենայն երկրի, զիմս խառնեալ ընդ նոցին պարտիս եւ ի նոցայոցն զառ իս դառնութիւն կրկին առաւելեալ, նոքաւք հեծեծեցից» (Ծ,գ): «Մատեանը» քարոզում է իրական կյանքի ու իրական մարդու պաշտամունք: Դա առանձնապես դրսևորվում է փրկության գաղափարի նարեկյան մեկնաբանության մեջ: Համաձայն միստիցիզմի դասական ըմբռնման՝ Աստծու հետ միանալու մենաշնորհը վերապահվում է ընտրյալներին, փրկությունն էլ կատարվում է Հայտնության միջոցով: Մինչդեռ, ըստ Նարեկացու, փրկությունը ընտրյալների մենաշնորհը չէ, բոլոր մարդիկ, անկախ ազգային, սեռային, դասային, ռասայական պատկանելությունից, արժանի են փրկության: Եվ իրեն համարելով մարդկանցից ամենամեղավորը՝ նա առավել մտահոգված է Մարդու-Մարդկության փրկության խնդրով և իր անձի փրկությունն էլ տեսնում է միայն հանուրի փրկության մեջ. «Եթե գրեսցի եւ ի փրկութիւն կարգեսցի հաղորդելոցն յայս կիրս կենաց, արասցես կամաւք քո, աւրհնեալ, եւ ինձ համարեալ» (Գ,գ): Ավելին, եթե միստիկական փիլիսոփայության տեսանկյունից

[8] Տե՛ս **Кимелев Ю. А.** Философия религии. Систематический очерк. М., Мысль, 1989:

փրկությունը ամբողջապես կախված է Աստծու բարեգթությունից և բացառապես հնարավոր է միայն աստվածային ողորմածության շնորհիվ, ապա, ըստ Նարեկացու, մարդու փրկությունը բացարձակ կախման մեջ դնել Աստծու գթասրտությունից կնշանակի անհնարին դարձնել այն:

Նարեկացին մարդու իրական փրկության գործընթացում Աստծու ողորմածությունը համարում է անհրաժեշտ, բայց ոչ բավարար և կարևորում է մարդու բանականության ու կամքի գործադրումը, կատարյալ գիտելիքի ձեռքբերումը, ինքնաճանաչման հասնելն ու մաքրագործվելը. «Այլ առցէ՛ զայս կշտամբութիւն մաքուրն՝ նիւթ պսակաց՝ առ ի չիջանել անընտրողաբար յանձեռնհասն բարձրութենէ, եւ պատժապարտն՝ առիթ ազատութեան, որով ամբարձեալ ի կործանմանէ հոգեւորական մահուն՝ ապրեսցի յուսով» (ԿԶ,ա): Նա մարդկային անարդարությունների դեմ մարտնչող մտածող է և մարդու բարոյական կատարելագործման խնդիրը խարսխում է սոցիալական հիմքի վրա. անհերքելի ու անժխտելի իրողություն, որը նույնպես դժվար է տեղավորել միստիկական հայեցակարգի շրջանակներում: Եվ ինչպես չասել, որ ի տարբերություն Դանտեի, որը հանդերձյալ աշխարհում հայում էր այլոց տառապանքներին, ականատես լինում ոմանց մաքրագործմանն ու դրախտային կյանքին արժանանալուն, Նարեկացին, իրեն վերագրելով մարդու կատարած, կատարվող ու կատարվելիք հնարավոր բոլոր մեղքերն ու արատները, դրանով իսկ անցնելով երկրային դժոխքի՝ մեղսալից աշխարհի, մարդկային տառապանքների միջով, ձգտում է ինքնաճանաչմամբ ու ինքնախոստովանությամբ մարդ արարածին տանել մաքրագործման ճանապարհով, դարձնել նրան կատարյալ ու հասցնել իրական փրկության: Եվ այս առումով, անշուշտ, «Մատեանը» նաև **ինքնաճանաչման դասագիրք** է:

Վերջին հաշվով, Նարեկացին հավատացել է մարդու՝ կատարյալ դառնալու հնարավորությանը և իբրև ապացույց վկայակոչել իր անձը. «Արտաքուստ և ներքուստ հենց իրեն Աստծուն եմ հագել», միտք, որի ահավորությունից թեև զարհուրած, այդուհանդերձ հայտարարում է, թե մարդն իր արարչագործ էությամբ կարող է «…Աստուած իսկ լինել ընտրութեամբ շնորհին եւ ընդ հաստողիդ միանալ՝ տէրունի մարմնոյդ ճաշակմամբ եւ ընդ լուսոյդ կենաց խառնութեամբ…» (ԾԲ,գ): Ոմանց համար այս միտքը կարող է համարվել միստիկայի բարձրակետը: Սակայն սա ասողը քրիստոնյա աստվածաբանն է ու վանականը, այլ ոչ թե միստիկը…

Վերջապես, **հինգերրորդ**. չպետք է անտեսել ու շրջանցել ստեղծագործության բուն էությունը, այն է՝ **ողբերգություն** լինելու իրողությունը, որի մասին հեղինակը, ինչպես արդեն նշեցինք, բազմիցս հիշեցնում է «Մատեանի» տարբեր գլուխներում: Այո՛, «Մատեանը» **Բանական Գոյի Ողբերգությունը** պատկերող, համամարդկային հնչեղություն ունեցող, **բազմաշերտ, բազմամասնյա ու բազմատեսանկյուն** ստեղծագործություն է, որը **նախ**՝ խարսխվում է հոգևոր երկվության, այն է՝ կատարյալի ու անկատարի, աստվածայինի և մարդկայինի,

հզորի և անզորի, առաքինության և արատի հակադրության վրա: «Եւ ահաւորութիւն էին՝ ընդ փոքրկութիւն բնութեանս ընդհարեալ» (Իգ,բ), - ասում է Նարեկացին ու միաժամանակ աղերսում Աստծուն, որ նա փոքր-ինչ մեղմի այդ ընդհարումը. - «Մի' ընդհարկանիր խստեութեամբ մեծդ ընդ փոքուս, լոյսդ՝ ընդ ստուերականիս, բնութեամբ բարիդ՝ ընդ ի բնէ չարիս…» (ԺԷ,բ):

Ողբերգության **մյուս երեսը** իրական կյանքի և քրիստոնեական իդեալի միջև միջնադարում ծայրահեղության հասած օտարման ու խորացող հակասության արտացոլումն է և եկեղեցական միջնորդավորված հավատը անմիջական, բանական հավատով փոխարինելու միջոցով այդ հակասության հաղթահարման հայեցակարգի առաջադրումը: Այս առումով «Մատեանը» դոգմատիզացված հավատի, խաթարված բարոյական արժեքների ողբերգական վերապրումն է: Ահա թե ինչու Նարեկացին իր ողբերգության մատյանի գերխնդիրը համարում է հավատի նոր շենքի կառուցումը. «Եւ սկզբնաւոր ողբերգութեան այսր աղերսանաց զհաւատոցն շինված կառուցից» (Ժ,բ): Ավելին, բանաստեղծի խոսքերով ասած՝ իր «բազմաստեղնեան հրաշակերտությունը» ավետարանական գաղափարների, «կենսատու խորհուրդների» «հանդիսավոր մեկնաբանությունն է»՝ հանուն եկեղեցու բարենորոգման:

Ողբերգության **երրորդ շերտը** իր մեղավորությունը գիտակցող մարդու անզիջում պայքարն է ինքն իր դեմ, հոգևոր արատների ինքնաճաղկումն ու ինքնամերկացումը, որին հետևում են ներման տանջալից աղերսն ու ակնկալվող հաշտեցման բերկրանքը: Ընդ որում, տառապանք պատճառող այդ խորը ցավն այլևս անհատի ցավը չէ, այլ անձնական ես-ի միջով բեկված ու անանձնականի վերածված մարդկային ցեղի, մարդկության ցավը:

Ողբերգության **տեսանկյուններից** մեկն էլ վերաբերում է մարդկային բանականության հակասական բնույթի ու երկփեղկվածության, այն է՝ բանականության արարող ու ավերող բնույթի, ինչպես նաև գոյի էությանը հասու լինելու դրա անզորության, սահմանափակության ու բանականության հնարավորությունների չարաշահման սպառնալիքի գիտակցմանը: Ողբերգության **մյուս շերտն** էլ զուտ անձնական է, որը վերաբերում է Նարեկացու դառը ճակատագրին և ծածկագրություններով ներկայացվում է «Մատեանում»[9]:

Ինչևէ, իրական կյանքով ապրող, մարդու ցավն ու վիշտը իր սեփականը համարող, նրա երկրային կեցության **ողբերգականությունը պատկերող**, քրիստոնեական եկեղեցու բարենորոգմանը հետամուտ, ոչ թե անձնական, այլ հանուրի փրկության համար Աստծուն աղերսողն ու բոլորի փոխարեն ՄԵՂԱ ասողը պարզապես չի կարող միստիկ լինել: Ասել կուզի, թե «Մատեանը» իր բնույթով միստիկային առնչվում է այնքանով, որքանով որ կրոնի ու կյանքի առօրեական ընկալման մեջ առկա է միստիկականն առհասարակ: Ի լրումն ասվածի՝ Նարեկացին հանճարեղ արվեստագետ է, իսկ արվեստագետն ու

[9] Ողբերգության այս շերտը հանգամանալից ներկայացված է նարեկացիագետ **Հ. Ղ. Միրզոյանի** «Նարեկացու առեղծվածը» հոդվածում, տե՛ս Նարեկացիագիտական հետազոտություններ, էջ 35-67:

միստիկը, ինչպես Ֆ. Նիցշեն է ասում, «համադրելի չեն»[10], այն է՝ անհամատեղելի իրողություններ են: Հիրավի, Նարեկացու մտածողության խորությունն ու մտքի թռիչքը չեն հանդուրժում ոչ մի սահման, ոչ մի կաղապարում …

Ամփոփում: Վերը շարադրվածից հետևում է, որ ի տարբերություն միջնադարում տիրապետող Եսակենտրոն (Հին Կտակարան) և Աստվածակենտրոն (Նոր Կտակարան) ըմբռնումների՝ Նարեկացին «Մատեանում» առաջադրում և զարգացնում է Մարդ-Աստված փոխհարաբերության մարդակենտրոն հայեցակարգ, որտեղ առկա է իրական կյանքի իմաստավորում՝ իր ամբողջ դրամատիզմով հանդերձ: Ասել կուզի, թե Մարդ-Աստված փոխհարաբերության նարեկյան արժևորումներն ամենևին չեն ներդաշնակվում միստիկայի ո՛չ ավանդական-միջնադարյան և ո՛չ էլ առավել ևս ժամանակակից ըմբռնումներին, քանզի նրա աշխարհայացքը իրատեսական է, գերհագեցած է սոցիալական բովանդակությամբ ու գործնական մարդասիրությամբ և վերջին հաշվով նաև գեղարվեստական, ընդհանրացված արտացոլումն է 10-րդ դարում Հայաստանում ստեղծված սոցիալ-քաղաքական ու գաղափարական ծայրահեղ բարդ ու լարված իրավիճակի:

АЙК АРОЯН, НЕЛЛИ АРОЯН – *Мистик ли Григор Нарекаци?* – В статье переосмысливается господствующая в нарекациоведении точка зрение о мистицизме гениального армянского мыслителя средневековья Григора Нарекаци. В частности, показывается, что безоговорочное причисление Гр. Нарекаци в ряд мистиков противоречит духу и логике его шедевра «Матеан вохбергутеан», т.к., во-первых, в нем представляется человеческую жизнь в ее трагичности и возвышенности; во-вторых, в интерпретации этого уникального творения, вопреки воле автора, игнорировалось главное, а именно, трагедия человеческого бытия во всех аспектах его драматизма; в-третьих, в отличия от теоцентрического миропонимания господствующего в средневековье Гр. Нарекаци развивает антропоцентрическое миропонимание, в центре которого стоит реальный человек со своими тревогами и надеждами. «Матеан вохбергутеан» является отражением трагичности разумного бытия, т.е. показывает трагедию человека, оказывающегося на краю «духовной гибели»: это всеохватывающая трагедия человеческой жизни, которая возникает от неумолимой борьбы добра и зла, от столкновения человеческого и божественного, представленная посредством христианских символов. Нарекаци – певец боли и страданий рода человеческого. В основе его творения лежит боль, которая, взрываясь и бунтуя в душе гениального мыслителя, многое превращает в безличностное, придает личной трагедии общечеловеческий характер. В сущности проблема взаимоотношения Человека и Бога в интерпретации мыслителя никак не гармонизирует с мистическим пониманием, т.к. его конечная цель не личное спасение и слияние с Богом, как это свойственно мистицизму, а достижение спасения здесь и сейчас - в посюстороннем мире, путем духовного преобразования и самосовершенствования человека и человечества.

Ключевые слова: *человек, Бог, вера, разум, мистика, спасение, трагедия, самосовершенствование, духовное преобразование, существование.*

[10] **Ницше Ф**. Так говорил Заратустра, Азбука, Азбука-Аттикус, 2022, с. 373.

HAYK HAROYAN, NELLI HAROYAN – *Is Grigor Narekatsi a Mystic?* – The article comes to prove the thesis that considering Gr. Narekatsi a mystic with no restraint would contradict the essence and logic of "The Book of Lamentations" as the book's interpretation of the Man-God relation does not harmonize with the mystic conception of reliving the presence of God only conceptually. Narekatsi's ultimate aim is to reach earthly soul-saving now and here via Man's and Humanity's spiritual and moral self-perfection. Thus, by his work Narekatsi comes into contact with mysticism as much as it is present in the everyday conception of religious belief and life whatsoever.

In this regard, the tragedy portrayed in "The Book of Lamentations" is multi-layered; on the one hand, it reflects human alienation from God and overcoming these controversies on the basis of unhindered reasonable faith as the true way of human perfection and redemption, on the other hand, it reflects mental dualism: the conflict between good and evil, human and divine.

The authors shed light on the proper philosophical-religious aspects of this many-sided work for the first time, stressing its novelty, namely the attempts to improve the doctrine of the church, the reform-minded approach to the interpretation of the problem of interrelation between faith and reason, a human and God.

Key words: *human, God, Mysticism, redemption, self-perfection, spiritual transformation, common sense, faith, existence, tragedy*

Էթիկայի վերաբերյալ հայտարարություն
Հեղինակները հաստատում են, որ պահպանվել են հետազոտությանը վերաբերող էթիկական բոլոր պահանջները։

Շահերի բախման վերաբերյալ հայտարարություն
Հեղինակները հաստատում են, որ շահերի բախում առկա չէ։

References

Khachatryan P. Grigor Narekats'in yev hay mijnadary, girk' arrajin, S.Ejmiatsin, 1996 (in Armenian).
Kimelev Yu.A. Filosofiya religii. Sistematicheskiy ocherk. M., Mysl', 1989 (in Armenian).
Mirzoyan H.Gh. Narekats'iagitakan hetazotut'yunner (Hodvatsneri zhoghovatsu), Yer., YePH hratarakch'ut'yun, 2010 (in Armenian).
Narekats'I Gr., Matean voghbergut'ean, ashkhatasirut'yamb P.M.Khach'atryani yev A.A.Ghazinyani, Yer., HSSH GA hrat., 1985 (in Armenian).
Nitsche F. Tak govoril Zaratustra, Azbuka, Azbuka-Attikus, 2022 (in Russian).
Sovetskiy entsiklopedicheskiy slovar', 3-ye isd.-M.:Sov.entsiklopediya, 1985 (in Russian).